

# ԵՐԿԱԹԳԻԾԸ ԲԱՑՎԵԼ Է, ԲԱՅՅ...

Այսօր, դիտելով Ադրբեջանից Հայաստան մտնող երկաթուղու աշխատանքը, ակամա հիշում ես երկրաշարժից հետո ստեղծված լարված օրերը: Ինչպես այն ժամանակ, այժմ էլ մեծացել է գնացքների հոսքը: Բայց եթե այն ժամանակ բնական էր այդ երկույթը՝ թելադրված հեռու ու մոտ մեր բարեկամների՝ աղետի ենթարկվածներիս օգնելու մարդկային քղումով, ապա այժմ ստեղծված լարվածությունը մեր «իմտերնացիոնալ» հարեվանի արդեն ամբողջ աշխարհին հայտնի անբարո արարքի՝ ամիսներ տևած շրջափակման հետևանք է:

Իրար հետևից հայկական կայարաններ են մտնում շինանյութերով, տնակներով, ժողովրդատնտեսական այլ բեռներով բեռնավորված գնացքները: Այնքան սպասված գնացքները, որոնք ամիսներ բանտված են եղել Ադրբեջանի երկաթուղում: Եվ, բնականաբար, շատացել է հայ երկաթուղայինների աշխատանքը: Պետք է հասցնել վագոնները տեսակավորել, ուղարկել ըստ պատկանելության, կազմակերպել դրանց ժամանակին բեռնաթափումը, որպեսզի առանց այն էլ տուժած տնտեսությունը ավելի չտուժի:

— Մեզ համար այս վիճակը այնքան էլ անսպասելի չէր,—

պատմում է «Երևան» կայարանի կուսբյուրոյի քարտուղար Ն. Տեր-Կարապետյանը:— Ամիսներ տևած շրջափակումը մեզ հուշում էր, որ կգա մի օր, երբ Ադրբեջանում բանտված մեզ հասցեագրված վագոնները իրար հետևից կսկսեն մուտք գործել Հայաստան, ու բոլորիս հոգսերը կբազմապատկվեն: Ինչ-որ տեղ դրան նախապատրաստվում էինք:

Սակայն, իրական վիճակը գերազանցել է սպասելիքները: Եվ ոչ այն առումով, որ վագոնների հոսքը բավականին մեծ է: Յուրաքանչյուր պատվիրատու իրագել էր նաև պարհիմ գտնվող իր բեռների մասին և, անհամբերությամբ սպասելով դրանց, նախօրոք միջոցներ էր ձեռնարկում, դրանք ստացվելու դեպքում, արագ բեռնաթափելու համար: Բայց հոգսերը շատացել են մեկ այլ պատճառով ևս: Մեր հարևանները, չբավարարվելով երկաթգիծը փակելով, շատ վագոններ բացել են, բեռները թալանել, ջարդել, փշացրել: Ահա թե ինչու «Երևան» կայարանում հիմարկ - ձեռնարկություններից անընդհատ ստացվում են ահազանգեր՝ պետք է առևտրական ակտ կազմել: Նման ամեն մի առիթով հարկ է լինում մարդկանց հիմնական գործից

կտրել, համձնաժողովներ ստեղծել, ուղարկել ահազանգի հետևից: Այսպես, միայն հոկտեմբերի 1—15-ը Նորաշենից Երևան մտած 11 գրնացքների առիթով 28 առևտրական ակտ է կազմվել:

Հասկանալի պատճառներով հատկապես տուժել են սննդամթերքներով բարձրված վագոնները: Դրանց պարունակությունը տեղ է հասնում նեխած ու փտած վիճակում: Ի՞նչ անես: Երկաթուղում գործող օրենքի համաձայն պատվիրատուն չի կարող դրանցից հրաժարվել, հետ ուղարկել: Ստիպված ակտավորում ու թափում են: Վերջին շաբաթներից այդ բախտին են արժանացել մեծ քանակությամբ կարտոֆիլ, սոխ, կաթի փոշի, այլ սննդամթերքներ: Մի էլք է մնում՝ կենտրոնական մարմինների միջոցով ստիպել ադրբեջանական կողմին՝ փոխհատուցելու տնտեսությանը հասցված վնասները:

Ստացվող ամեն մի գնացք ավելի է մեծացնում դրանք ընդունողների վրդովմունքը: Ըստ որում, վերջիններիս շարքում քիչ չեն Մոսկվայից եկած մասնագետները, որոնք իրենց աչքով տեսնում ու համոզվում են, թե ինչպիսի բարբարոսություններ են կատարվել Ադրբեջանի տարածքում: Նրանք

համոզվում են նաև, որ շրջափակումն սկսվել է ոչ թե սեպտեմբերին, ինչպես քաղաքացիական պատերազմից է, այլ շատ ավելի վաղ: Դրա վկայությունները այն վագոններն են, որ բարձրել ու ելման կետերից դուրս են եկել օգոստոսի սկզբներին ու... տեղ հասել հոկտեմբերի երկրորդ կեսին: Թե ինչպիսին կլինի հետևությունը վերևներում, դժվար է ասել: Բայց մի բան հայ երկաթուղայինների համար պարզից պարզ է. երևույթը պետք է ստանա քաղաքական գնահատական, մեղավորները պետք է պատժվեն օրենքի ամենայն խստությամբ և, բացի այդ, պետք է միջոցներ ձեռնարկել, որպեսզի այսուհետ ոչ մի ռեզիդում մասն բաժայլև չկրկնվի:

Իրությունը ինչքան էլ լարված ու անբնական է, այնուամենայնիվ, «Երևան» կայարանում, նրա ծառայություններից օգտվող հիմնարկ-ձեռնարկությունների փակուղիներում ամեն ինչ անում են, որ ստացված վագոնները բեռնաթափվեն ժամանակին: Համենայն դեպս, այսօրվա դրությամբ այստեղ ոչ մի վագոնի գերնորմատիվային պարապորդի փաստ չի արձանագրվել: Երկաթուղայինները դա բացատրում են նաև այն հանգամանքով, որ շատ ձեռնարկություններում հումքի, նյութերի պաշարները լրիվ սպառվել են, պահեստները՝ դատարկվել, և բոլորի համար նոր բեռները տեղ հասցնելը, արտադրության համաշափության վերականգնելը օրվա հրամայականն է դարձել:

Բարոյական մի խթանիչ էլ կա. «Ներքևներում» ու «Վերևներում» շատ է խոսվել ու գրվել շրջափակման ու դրա

հետևանքով մեզանում առաջացած լուրջ դժվարությունների մասին: Եղել են նաև ոչ ճիշտ մոտեցումներ, ոչ օրյեկտիվ գնահատականներ, մեղադրանքներ: Այսօր, երբ վագոնների հոսքը վերսկսվել է, ոչ ոք չի ուզում, որ ինչ-որ տեղ ինչ-որ մեկը վագոնների բեռնաթափումը ուղղակի համար փորձի քաղաքական կապիտալ ստեղծել, դա էլ մեղադրանքի առիթ դարձնել:

Երկաթուղում, բոլոր կայարաններում ու դրանց ծառայություններից օգտվող հիմնարկ-ձեռնարկությունների փակուղիներում լարված օրեր են: Առաջիկայում սպասվում է, որ գնացքների հոսքը ավելի կմեծանա: Կկարողանան մեր երկաթուղայինները այս դժվար ընկալությունից պատվով դուրս գալ: Պե՛տք է կարողանան: Այդ է վկայում վերջին օրերի նրանց աշխատանքը, այդ են վկայում նաև այն ջանքերը, որ գործադրվում են այսօր ու կգործադրվեն վաղը: Նրանք միաձայն որոշել են եկող շաբաթ դուրս գալ շաբաթօրյակի, ինչը մինչ այդ չհասցնեն անել, անեն այդ օրը ու վաստակած միջոցները փոխանցեն Ղարաբաղի օգնության ֆոնդ:

— Թող շրջափակման հեղինակներն իմանան՝ ոչ մի բռնություն չի կարող մեզ չեղել մեր հայրենակիցների արդար պահանջը պաշտպանելուց, նրանց գորավիզ լինելուց: Շրջափակումը սխալ ու դատարարտելի միջոց է ու դրանով հնարավոր չէ մեր ժողովրդին հետ պահել իր սուրբ նպատակից,— ասում են նրանք: